## ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ տպագրության նախահայր Հակոբ Մեղապարտի ջանքերով 1512 թ. Վենետիկում տպագրվեց առաջին հայերեն գիրքը՝ «Ուրբաթագիրքը»։ Բուն Հայաստանում տպագրության գործը սկիզբ առավ 1771 թ. Էջմիածնում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք.

Տպարան հիմնադրելու գաղափարը Սիմեոն Երևանցուն ներշնչել էր Մադրասաբնակ ջուղայեցի մեծահարուստ վաճառական Գրիգոր Միրզայելյան-Չաքիկյանը, որը խոստացել էր Էջմիածնում տպարան հիմնադրելու դեպքում հոգալ ամբողջ ծախսը։ 1770 թ. Հնդկաստանի նվիրակ Հովսեփ վարդապետի գրած նամակներից իմացվում է, որ Գրիգոր Չաքիկյանը խոստացել է վճարել 9 հազար ռուփի, եթե Էջմիածնում տպարան կառուցվի։ Այդ փաստաթղթերը պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանի Արխիվային բաժնում[1]։

Կաթողիկոս ձեռնադրվելուց 3 տարի հետո՝ 1766 թ., Սիմեոն Երևանցին սկսում է տպարանի համար տառեր ձեռք բերելու մասին բանակցություններ վարել Կ. Պոլսում և Զմյուռնիայում տպագրական գործով զբաղվող մի շարք անձնավորությունների հետ, բայց հաջողության չի հասնում։ Այդ նա որոշում է հենց վանքում, տեղական միջոցներով պատրաստել տառեր, փորագրությունների ու զարդագրերի այլ անհրաժեշտ պարագաներ։ Այդ տպարանում տպագրված առաջին գրքի հիշատակարանից իմանում ենք, որ Միրաք, արհեստավորս Շոռոթեցին առանց նախնական մասնագիտական կրթության, շնորհիվ իր բնական ընդունակությունների, փորագրում է բոլորգիր, նոտրգիր և գլխագիր հայկական տառեր, որոնցով և տպագրվում է առաջին գիրքը։ Հարությունն Էջմիածնեցին քանդակում է խորաններ, նկարներ, զարդագրեր ու ծաղկազարդեր. նրան հետագայում աշակերտում էր Խաչատուր գրիչը։ Գրաշարներն էին Հովսեփ վարդապետը և Եփրեմ սարկավագը, տպագրիչները («մրագործ և տպող»)՝ Գրիգորն ու Մանուկը և «ջրողն գրոցն»՝ տիրացու Խաչատուրը։ Իսահակ Գեղամացին զբաղվում է խմբագրական և սրբագրական աշխատանքով և 3 տարի հետո դառնում է տպարանի կառավարիչ ու կարգադրիչ։

Տպարանը հիմնադրվում է 1771 թ. վանքի բակում մի փոքրիկ անհամարժեք շենքում և կոչվում է Ս. Գրիգոր Լուսավորչի անունով։ Տպարանի շենքը 1773 թ. մի փոքր ընդարձակվում է և բարեկարգվում, որի մասին Սիմեոն Երևանցին նույն թվականին Չաքիկյանին ուղղած իր նամակում գրում է[2]. «...տպագրատանն առաջ ինչ փոքրիկ էր, յայժմ ամբ մեծացուցաք, զի ամենայն գործոց և գործավորաց նեղի, ընդարձակ տեղի լինելոյն մերձ մեծանոյ...»

Էջմիածնի տպարանի առաջին արգասիքը Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգևոր» գիրքն է, որից երկու օրինակ պահպանվել է Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածուում (№№ 1497 և 1695) և երկու օրինակ՝ Պետական հանրապետական գրադարանի անձեռնմխելի հավաքածուում։ Գրքի վերջում զետեղված է մի հիշատակարան (էջ 164—182), որը կարևոր տեղեկություններ է տալիս ժամանակակից քաղաքական անցուդարձի և տպարանի պատմության մասին։ Մանավորապես տպարանի հիմնադրման և առաջին գրքի տպագրության մասին հիշատակարանում ասված է. «...Որք ընդունիքդ ընծայեցայս ծաղիկս և զնախահայտ պտուղս զայս, նախապէս ներեցէք անհմտութեան սորին... Քանզի՝ սա պարագայքին իւրովք յամենայնի նոր է և անփորձ նմանապէս և գործավարքն սորին անկիրթք և երբէք չտեսեալ զմեքենին» (էջ 176)։

Տպարանը գործի գցելուց հետո թղթի մեծ պակաս կար է զգացվում և քանի որ դրսի աշխարհից մեծ քանակությամբ թուղթ ստանալը դժվար էր միանգամայն անհնարին, 1776 թ. Սիմեոն Երևանցու մեծ դժվարությամբ հաջողվում է Էջմիածնում հիմնադրել թղթի գործարան[3]։ Այստեղ պատրաստված թղթի վրա 1779—1783 թթ. տպագրվել է Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի պարտավճար»։ Այդ երևում է գրքի [illegible] վերջում բերված ոտանավորից, որ սկսվում է հետևյալ քառյակով.

Նոր թուղթ՝ նոր գիր՝ նոր տպարան
Բանք և բրնոր ի լոյս ածան.
Յաւանք պարգեւք նորագական
Ազգիս Հայոց պարգեւեցան....։

---

[1] Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 4, վավ. 6։
[2] Նույն տեղում, վավ. 35։
[3] Տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, № 1։

Բզթի գործարանը գործում է ընդամենը 5—6 տարի, մինչև Սիմեոն Երևանցու մահը։

Սիմեոն Երևանցու օրոք նրա հիմնադրած տպարանում լույս տեսած գրքերից մեզ հայտնի են հետևյալները. Դիրք աղօթից որ կոչի Զբօսարան հոգւոյ: *Արարեալ ի Սիմէօնէ... կաթողիկոսէ Ամենայն Հայոց, Էջմիածին, 1772,* Տաղարան *Սիմէօն Երեւանցւոյ, 1773*[4] Տօնացոյց, *Աշխատասիրութ. Սիմէօն կաթողիկոսի. Էջմիածին, 1774.* Կարգ թաղման կարգաւորաց, *Էջմիածին, 1777,* Տաղարան *Սիմէօն կաթողիկոսի, 1777:* Դիրք որ կոչի պարտաւճար, *Արարեալ Սիմէօն... կաթողիկոս, 1779։ Այս վերջին գրքի տպագրությունը, ինչպես տեսնք, սկսվել է 1779 թ., բայց Սիմեոն Երևանցու հիվանդության պատճառով ընդհատվել է, նրա մահվանից հետո, 1783 թ. վերջացրին, Ղուկաս կաթողիկոսի օրոք։*

*Ղուկաս կաթողիկոսի (1780—1799) օրոք շարունակվում է տպարանի գործունեությունը։ Նրա աթոռակալության տարիներին տպագրվում են.*

Ժամագիրք ատենի, *յորում պարունակին երեք գիրք, Էջմիածին, 1784։*

Պատմագիրք արարեալ Յովսեփոսի Եբրայեցւոյ: *Թարգմ. ի լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու... տեառն Ստեփաննոսի Ըռօմեցւոյ..., Էջմիածին, 1787։*

*Մատենադարանում պահվող ձեռագրերի շարքում պահպանվել է Հովսեփոս Եբրայեցու պատմության հայերեն թարգմանության Ստեփանոս Ռոմեցու ձեռագիրը, որը և հիմք է ծառայել սույն տպագրության*[5]*։*

Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան. *Տպագրեցեալ ի մեծ Աթոռոյ Էջմիածնի, հրամանաւ Տեառն Սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, ի թուոջ մերում ՌՄԼԶ (1787) և տպարանի սրբոյ Լուսաւորչին, 118 էջ, 16×11 սմ. չափի*[6]*։ Այս Սաղմոսարանը հայտնի չի եղել Թեոդիկին, Գ. Զարպհանալյանին և Գ. Լևոնյանին։ Նրա մասին հիշատակություն չկա նաև Հ. Վ. Գալուստյանի «Էջեր սուրբ Էջմիածնի տպարանի պատմությունից» հոդվածում, Ղուկաս Կարնեցու օրոք տպագրված գրքերի ցանկի մեջ*[7]*։ Այս Սաղմոսարանից մեկ օրինակ պահվում է Պատմության Թանգարանի գրադարանում։*

Խորհրդատետր սրբազան պատարագի. *ըստ արարողութեան սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Էջմիածին, ՌՄԼԷ (1788), 35 էջ, 23×21 սմ. չափի (Մատենադարան, Հնատիպ գրքերի հավաքածու, N 1306)։ Այս խորհրդատետրը նույնպես անհայտ է մնացել մեր մատենագետներին*[8]*։*

Նուագոց երաժշտական երգեցմունք հոգեւորականք. *Էջմիածին, ՌՄԼԸ (1789)։*

Տաղարան փոքրիկ. *Սիմեոն կաթողիկոս, 1793։*

*Ղուկաս կաթողիկոսից հետո Էջմիածնի տպարանը երկար ժամանակով դադարում է գործելուց։ Ալ. Երիցյանը գրում է. «Տաղարան փոքրիկ»-ի տպագրությունից հետո տպարանն ու գործարանը դադարեցին, ապա այնուհետև անցած խառնակ տարիներում պարսիկները ավարտակեցին, տարան և ոչնչացրին գործարանի պղնձե և երկաթե մեքենայքը և տպարանի տառերը»*[9]*։ Թեոդիկը նշում է, որ «1793 թվականեն վերջ, կես դար շարունակող տպարանական ամլություն մը կտիրե Էջմիածին։ Վերագրելի քաղաքական դեպքերու, որոնք կտակնուվրայեին Հայ աշխարհը, հետևապես նաև Ս. Աթոռը։ Հովհաննես Ը Կարբեցու կաթողիկոսի օրոք միայն, 1842-ին կսկսի Հ. Շահխաթունյանի «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի» շքեղական երկհատոր գիրքը»*[10]*։ Գ. Լևոնյանը այդ դադարը հասցնում է մինչև 1838 թ., երբ լույս տեսավ «Հարիւր և չորս պատմութիւնք հաւաքեալ ի հին և նոր կտակարանէ» ռուսերենից թարգմանված գիրքը*[11]*։*

*Էջմիածնի տպարանում տպագրված գրքերը պրպտելիս մեր ձեռքն ընկավ մի Սաղմոսարան, որը լույս է տեսել 1819 թ.։ Այս թվականը, ինչպես տեսնում ենք, բավականաչափ հեռու է*

---

[4] *Սիմեոն կաթողիկոսի գրած և 1773 և 1777 թթ. տպագրված տաղարաններից չի պահպանվել Հայաստանի ոչ մի գրադարանում։*

5 *Հովսեփոս Եբրայեցու պատմության գրչագիր օրինակներից 4-ը պահվում են մեր Մատենադարանում, որոնցից Ստեփանոսի ձեռքով գրվածը կրում է 1959 համարը։*

6 *Պատմության թանգարան, Հնատիպ գրքերի հավաքածու, N 464։*

7 *«Էջմիածին», 1958, սեպտ., էջ 53։*

8 *Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, N 4, էջ 428—429։*

9 *Ա լ. Ե ր ի ց յ ա ն, Պատմական տեսություն Հայ տպագրության, Տփխիս, 1879, էջ 26։*

10 *Թ ե ո դ ի կ, Տիպ ու տառ, էջ 177։*

11 *Գ. Լ և ո ն յ ա ն, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 215։*

ու Թեոդիկի և թե Գ. Լևոնյանի նշած թվականներից։ Բերում ենք Սաղմոսարանի լրիվ տիտղոսաթերթը. Սաղմոս Դաւթի։ Որ և կոչի Սաղմոսարան. Տպագրեցեալ ի Մեծի Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրամանաւ Տեառն Եփրեմի.... կաթողիկոսի ամենայն Հայոց, ի թուին մերում ՌՄԿԸ (1819) ի տպ. ս. Լուսաւորչին։ 417 էջ, 16×11 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 22136)։

Այս Սաղմոսարանը անհայտ է մնացել մեր մատենագետներին[12]։ Դրա, ինչպես և մի այլ գրքերի առկայությունը ապացուցում է, որ տպարանական գործը այնքան երկարատև չի եղել, ինչպես ենթադրվում էր։ Սաղմոսարանի հիշատակարանի մեջ ասվում է, որ երկար տարիներ անգործության մատնված տպարանը Եփրեմ կաթողիկոսի օրոք հիմնովին նորոգվում է գործի է դրվում. «...Արդ որք յանդիման լինիք սովաւ մի ծանծրացոյց վիճակ... Տէր Սիմէօն... յօժարամիտ կաթողիկոսն և ժամանակին զվերանորոգօղն տպարանիս զՏէր Եփրեմ յոգնավաստակ երրորդն վեհափառ, որ ի նեղութեան ժամանակի... պայծառագոյն և գրել ի նիւթն նորոգեաց զապարանն սրբոյ զանխս... վերականգնեալ ի բազում ամաց նմա» (ընդգծումը մերն է—Շ. Շ.)[13]։

Եփրեմ կաթողիկոսի օրոք «Սաղմոսարան»-ից հետո լույս է տեսել ևս մեկ գիրք, որը տիտղոսաթերթում կարդում ենք. Կոնդակ վասն փրկագործ Չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ի տասներորդում ամի Հայրապետութեան Տ. Տ. Եփրեմայ կաթողիկոսի... Յամի տեառն 1820, մարտի 26, ի տպարանի սրբոյ Լուսաւորչին. 30 էջ, 18×14 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 7955)։ Այս գիրքը նույնպես չի հիշատակված մեր մատենագետների մոտ։

Որոշ դադարից հետո տպարանը վերսկսում է գործել Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի օրոք, բայց այնուամենայնիվ գործել ավելի շուտ, քան ենթադրում էին Գ. Լևոնյանը և Թեոդիկը։ Այդ է ապացուցում մեր ձեռքի տակ եղած 1833 թ. տպագրված «Զայնարար շարականը», որ նույնպես անհայտ է եղել մեր մատենագետներին։ Դրա լրիվ տիտղոսաթերթը հետևյալն է. Զայնարար շարական յորում բովանդակին հոգևորական պաշտօնեութիւնք սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց ի փառաբանութիւն... ի Հայրապետութեան... Յովհաննու Կարբեցւոյ... ի սուրբ կաթուղիկէն Էջմիածին. Յամի տեառն 1833 և Հայոց ՌՄՁԲ, 56 էջ, 33×22 սմ. չափի։ Այս գրքի հիշատակարանում ուշագրավ են հետևյալ տողերը. «Արդ՝ որք վայելէք զհոգեշունչ երգարանս... յիշեսջիք յարժանաւոր մաղթանս ձեր զվերահաստատօղն Տպարանիս... ութերորդ Յովհաննէս Կարբեցի... կաթողիկոսն ամենայն Հայոց, որ յետ վճարելոյն զմեծ մասն պարտուց սրբոյ Աթոռոյս՝ հոգ կալաւ մեծաջան աշխատութեամբ և վասն շինութեան և պայծառութեան սորին, որ ահա իբրև զիր առաջին նորոգեալ պատրաստեալ զայն Երգարան ի լոյս ընծայեաց վերստին տպագրութեամբ»[14]։

Զայնարար շարականից հետո տպագրվել են հետևյալ գրքերը.

Գիրք նանգիսագրութեանց տօնից կայսերականաց։ Տպագրեցեալ ի Սիմէօնէ կաթողիկոսէ... յաւելուածովք նորահրաշ շարականաց և աղօթից. Յամի տեառն 1833. Տպեալ 3-րդ անգամ[15]։

Տօնացոյց... յօրինական կարգադրութեամբ և աշխատասիրութեամբ Տ. Սիմէօնի սրբազան կաթողիկոսին... և Էջմիածին տպագրեալ... ի վեհափառ հայրապետութեան... Տեառն 8-րդ Յովհաննու Կարբեցւոյ... Յամի 1835, 576 էջ, 16×11 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 7930)։ Սրա հիշատակարանի մեջ կարդում ենք. «...յիշեսջիք... զվերահաստատօղն տպարանիս... Յովհաննէս Կարբեցի... կաթողիկոսն... առատաձեռնութեամբ և մեծաջան աշխատութեամբ հոգ կալաւ վասն շինութեան և պայծառութեան սորին» (էջ 575)։ Գ. Զարպհանալյանի մատենագիտության մեջ «Տօնացույցների» հատվածում նշված է Ս. Երևանցու «Տօնացոյ-

[12] Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, N 4, էջ 434։

[13] «Սաղմոսարան», Էջմիածին, 1819, էջ 415։ Ըստ Վահան Գուլամիրյանի, Եփրեմ կաթողիկոսի օրոք «Տպարանի վերականգնման աշխատանքները շարունակվում են, բայց տպարանը չի գործում» (տե՛ս «Էջմիածին», 1958, N 9, էջ 36)։

[14] Մատենադարան, Հայ գրքի հավաքածու, N 8684, էջ 562 (ընդգծումները մերն են—Շ. Շ.)։

[15] Այս գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել Ն. Նախիջևանում, 1794 թ., «Գիրք աղօթից ասելու բառ արժանոյն հանդիսի տօնեցելոյն...» վերնագրով։ Այդ հրատարակության մեջ անհայտ են հավելումները սկզբից և վերջից։ Տե՛ս նաև «Բանբեր Մատենադարանի», 1958, N 4, էջ 435։

ցի» սաղջին՝ 1774 թ. հրատարակությունը։ Երկրորդ և վերջին հրատարակությունն այստեղ համարված է Կ. Պոլսի 1799 թ. հրատարակությունը, իսկ այս՝ 1835 թ. հրատարակությունը չի հիշատակված[16]։

Գիրք որ կոչի Մաշտոց. յորում ամենայն սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց՝ 1836, 447 էջ, 19×12 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 11432)։ Այս գիրքը չի հիշատակված Թեոդիկի «Տիպ ու տառ»-ի էջմիածնի տպարանի համարում։ Ա. Ղազիկյանը «Մաշտոց» համարում ենթադրում է, որ 23-րդ հրատարակությունը 1836 թ. էջմիածնում տպագրված պետք է լինի, սակայն իր ենթադրությունը դնում է հարցականի տակ[17]։ Այս «Մաշտոցի» մասին հիշատակություն չկա նաև Գ. Լևոնյանի մոտ[18]։

Բարեպաշտոյն կարգադրութիւն. *Յաղագս կատարման գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Թէոդոսիան, 1836։*

Հարիւր և չորս սուրբ պատմութիւն. *1838.*

Ճաշոց գիրք: *Որ ըստ խորհրդոյ և ըստ պատշաճի ընթերցանելիք աւուրց տարւոյն գտին և գնոր գկատարանացն բանս ի սուրբ եկեղեցիս Հայաստանեայց ընթեռնլի ընդ այլ տարեւոր աղօթից և ճառից շարակարգելոց... Տպեալ... Յամի տեառն 1839 և հայոց ՌՄՂԸ. ի տպարանի գերագահ Աթոռոյն Սրբոյ կաթուղիկէ էջմիածնի, 811 էջ, 45×25 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 9948)։ Այս գիրքը հարուստ է գլխագրերով և նկարներով։ Այս մեծադիր «Ճաշոցը» անհայտ է մնացել մեր մատենագետներին. նրա մասին հիշատակություն չկա Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտության» մեջ, որի «Ճաշոց» համարում 6-րդ հրատարակությունը համարվում է Կ. Պոլսի 1793 թ. տպագրությունը, 7-րդը՝ Կ. Պոլսի 1799 թ., 8-րդը՝ 1872 թ. էջմիածնի տպագրությունը, իսկ 1839 թ. տպագրությունը դուրս է մնացել նրա ցանկից[19]։ Թեոդիկի «Տիպ ու տառ»-ի մեջ նույնպես չկա հիշատակություն դրա մասին։ Գ. Զարպհանալյանը «Ճաշոց»-ի 3-րդ հրատարակությունը համարում է Կ. Պոլսում 1793 թ. տպագրածը, իսկ 4-րդը՝ էջմիածնի 1874 թվականինը[20]։*

Խորհրդատետր սրբազան պատարագի. *ըստ արարողութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց։ Տպագրեցեալ... Հրամանաւ Տեառն Ղուկասու... կաթուղիկոսի... Յամի ՌՄԼԷ։ Վերստին տպեալ... Հրամանաւ Յովհաննու ութերորդ Կարբեցւոյ... կաթուղիկոսի... 1840... 35 էջ, 31×21 սմ. չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 8680)։ Ա. Ղազիկյանը «Խորհրդատետր» համարում էջմիածնի տպարանում տպագրված խորհրդատետրերից նշել է միայն 1873 թ. տպագրությունը (էջ 1167)։ Այդ տպարանում տպագրված 1788, 1840 և 1866 թվականների հրատարակվածները չեն նշված։*

Կեսակուր Խանանայից, *1841։*

Յ. Շահխաթունեան. *Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, 1842։*

Արհեստ թուաբանութեան *աշխատասիրեալ ի Կարապետ Ս. Սարկաւագէ Շահնազարեանց. ուսուցչէ թուաբանութեան ի ճեմարանի Սրբոյն էջմիածնի... էջմիածին։ 1842, 140 էջ, 23×15 սմ չափի (Մատենադարանի հայագիտական գրադարան, N 8283)։ Այս գիրքը նույնպես անհայտ է եղել մեր մատենագետներին։ Կ. Կոստանյանի «Կարապետ Վ. Շահնազարյանի կենսագրությունը» աշխատությունից իմանում ենք, որ Կ. Շահնազարյանը էջմիածնի միաբաններից է եղել։ Նա 1835 թ. ուղարկվել է Թիֆլիս՝ Արղությանների մասնավոր վարժարանում ռուսերենի և թվաբանության մեջ կատարելագործվելու։ 1836 թ. Հովհաննես Կարբեցին նրան ուղարկում է Մոսկվայի Լազարյան ճեմարանում սովորելու։ 1839 թ. նա ավարտում է ճեմարանը, վերադառնում էջմիածին և նշանակվում Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցի ուսուցիչ և տեսուչ։ Նա դասավանդում է հայերեն, ռուսերեն և թվաբանություն։ Այդ տարիներին գրում է դասագրքեր։ Այս թվաբանության դասագիրքն էլ գրվել է այդ տարիներին և 1842 թ. տպագրվել էջմիածնի տպարանում։ Կ. Կոստանյանը վերը հիշված գրքի մեջ նշում է սույն թվաբանության դասագրքի 1849 թ. տպագրությունը։*

16 Տե՛ս Գ. Զարպհանալյան, *Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 682—685։*

17 Տե՛ս Ա. Ղազիկյան, *Հայկական նոր մատենագիտություն, էջ 1196։*

18 Գ. Լևոնյան, *նշվ. աշխ., էջ 215։*

19 Ա. Ղազիկյան, *նշվ. աշխ., էջ 1690—1691։*

20 Գ. Զարպհանալյան, *նշվ. աշխ., էջ 385—386։*

Այսպիսով, Հովհաննես Կարբեցին կաթողիկոս ձեռնադրվելուց հետո վերանորոգում է տպարանը և 1833—1842 թթ. ընթացքում տպագրել է տասից ավելի գիրք: Այդ գրքերի տիտղոսաթերթերի ու հիշատակարանների տվյալների հիման վրա ժխտվում է այն սխալ կարծիքը, որ կա տպագրության գործի պատմությամբ զբաղվող մեր բանասերներից Թեոդիկի, Գ. Լևոնյանի, Ալ. Երիցյանի և ուրիշների մոտ, որոնք տպարանի գործունեության երկարատև դադարը 1793 թվականից համարում են մինչև 1812 թվականը:

Շ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

«Թութակ Հայկազյան» խորագիրը կրող պարբերականի մասին հիշատակություններ կան Գ. Գալեմքյարյանի, Գ. Լևոնյանի և Հովհ. Պետրոսյանի մոտ: Սակայն այդ հեղինակները հակասական, երբեմն անճիշտ տեղեկություններ են հաղորդում գրեթե անհայտ այդ պարբերականի բնույթի, լույս ընծայման ժամանակաշրջանի, խմբագիր-հրատարակիչների ու աշխատակիցների, ծավալի, ինչպես նաև հրատարակության հանգամանքների մասին: Ավելին, անծանոթ լինելով պարբերականին, Հովհ. Պետրոսյանը, ոչ միայն չի տվել նրա որևէ համարի բիբլիոգրաֆիան, այլև «Թութակի Հայկազյանին» նկարագրաբար վերագրել է «օրացույցի, տեղեկատուի» բնույթ[1]:

Զմյուռնիայի հայ մամուլի պատմությունն ուսումնասիրելիս, մենք հանդիպեցինք «Թութակ Հայկազյանին» վերաբերող մի շարք տպագիր աղբյուրների, ինչպես նաև հաջողվեց ձեռք բերել պարբերականի երկու համարների միկրոֆիլմը: Դրանք հնարավորություն են ընձեռում մանրամասն ծանոթանալու այդ պարբերականին, գնահատելու այն, ճշտելու նրա պատմության հետ կապված մի շարք հարցեր:

Մեր խոսքը նախ և առաջ Մինաս Նուպարյանի «Իմ մանկական հիշողությունները» վերնագրով մեմուարի մասին է, որ տպագրվել է «Արևելյան մամուլի» 1893—1894 թթ. համարներում: Ուրվագծելով Մեսրոպյան վարժարանի առաջին շրջանի պատմությունը, Մ. Նուպարյանը խոսում է նաև վարժարանի սաների հրատարակած տպագիր պարբերականների մասին: Դրանցից առաջինը հենց մեզ հետաքրքրող «Թութակ Հայկազյանն» է: Նուպարյանը վկայում է, որ Մեսրոպյան վարժարանի մի խումբ սաներ մանկավարժ Անդրեաս Փափազյանի հորդորներով ու խրախուսանքով հիմնել են անձնական տպարան[2]: Դա, իրականում, նույն հուշագրողի վկայությամբ, մի «անշուք և անհնարինը» հաստատություն էր և «հազիվ տպարանի մ'երևույթը կրնայինք»: Տպարանի համար իբրև շենք ծառայում էր ինչ-որ լքված տան մի անկյուն («որևէ տան մ'որևէ ձեռաց մեկ անկյանը մեջ»): Աշակերտական այդ տպարանը չուներ նաև անհրաժեշտ սարքավորում և տպագրական մեքենա: Նրա մամուլները խիստ տպագրական սարքի «հետ հեռավոր միայն նմանություն մը կրեին» և փայտից էին պատրաստված: Տպարանի առաջին փորձը ևս չափազանց խղճուկ էր: Նրանում Զմյուռնիայում գործող զանազան տպարանների հին տառերն էին օգտագործում:

Նուպարյանի այդ և այլ աղբյուրներում հրատարակված հուշերը լույս են սփռում նաև «Թութակ Հայկազյանի» խմբագրի ու հրատարակչի հարցի վրա: Հակառակ հին և նոր այն վկայությունների, որոնք պարբերականի խմբագիր են համարում տ. Վրթանեսին[3], Նուպարյանը պարզ ու որոշ հիշատակում է, որ նրա խմբագիրները և ընդհանրապես հրատարակիչները եղել են Մեսրոպյան վարժարանի բարձր դասարանի աշակերտները: Իրենք՝ աշակերտները գրում էին կամ թարգմանում «Թութակ Հայկազյանի» նյութերը, իրենք շարում ու սրբագրում էին, իրենք էլ տպագրում ու տարածում: Ինչ վերաբերում է պարբերականի խմբագրելուն,

---

[1] Հովհ. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794—1900), Երևան, 1956, էջ 170:

[2] «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1894, էջ 730: Անդրեաս Փափազյանի մանկավարժական գործունեության մասին տե՛ս մեր համառոտ ակնարկը տպագրված «Սովետական մանկավարժ» ամսագրի 1962 թ. № 11-ում (էջ 73—80):

[3] «Մասիս» 1884 թ. № 3731-ում տպագրված հայ մամուլի ցանկի կազմողը (Մ. Ն. Նորիկյան) ևս պարբերականի խմբագիրը համարում է տ. Վրթանեսին (էջ 56): Այս աղբյուրի վրա է հենվել Գալեմքյարյանը նշելով, թե պարբերականի հրատարակիչը տ. Վրթանեսն է: